

# Մ Ե Ն Ա Կ Մ Ա Ր Դ Ի Կ<sup>\*)</sup>

Դ Ր Ա Մ Ա

Գերհարս Հառապմանի

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Նոր դէպքերը համարեա անմիջապէս կապուած են չորրորդ գործողութեան մէջ պատահածներին: Սենեակը դատարկ է, վառուած լամպը դեռ մնում է սեղանի վրայ:

ՅՈՀԱՆՆԷՍ. (Դրսի դռնից մտնում է հապենպ եւ լի բարկութեամբ): Մայր: (Բացում է ննջարանի դուռը): Մայր:

Տ. ՖՅԿԵՐԱՏ. (Դուռն է գալիս ննջարանից): Էլ ի՞նչ պատահեց, տղայ: Մի աղմկիր այդպէս: Ֆիլիպպիկին կը զարթեցնես:

ՅՈՀ. Մայր, կ'ուզենայի իմանալ թէ ո՞վ քեզ իրաւունք տուեց—հեռացնել իմ սննդի հիւրերին:

Տ. ՖՅԿԵՐԱՏ. Բայց, տղայ... այդ իսկի մտքովս էլ չի անցել: Ես ոչ ոքի չեմ հեռացրել:

ՅՈՀ. (Բարկացած լիս ու առաջ փայլելով): Մայր, դու ստում ես:

Տ. ՖՅԿԵՐԱՏ. Եւ դու թոյլ ես տալիս քեզ այդ ասել մօրդ երեսին, Հաննէս:

ՅՈՀ. Ես պէտք է այդ քեզ ասեմ, որովհետեւ այդ այդպէս է: Օրիորդ Աննան պատրաստուում է գնալ և...

Տ. ՖՅԿԵՐԱՏ. Նա քեզ ասաց որ ես նրան սննդի մերժեցի:

ՅՈՀ. Հարկ չը կար որ նա ինձ ասի: Այդ ես ինքս էլ գիտեմ:

Տ. ՖՅԿԵՐԱՏ. Ի՞նչ գիտես, տղաս:

ՅՈՀ. Նա գնում է: Դուք այնքան խօսեցիք, խօսեցիք որ

\*) ՅՆԱ «Մուրճ» № № 3, 4, 5, 6, 7.

վերջապէս հասար ձեր նպատակին: Բայց ես քեզ ասում եմ. ես կը պառկեմ դռան առաջ: Ես կը վերցնեմ ատրճաճակը, (վերցնում է գրէքի պահարանից մի ասրնանակ):—Ահա, կ'ուղղեմ այսպէս զլիսիս: Եւ երբ նա գնայ, ես խսկոյն կ'արձակեմ, երգւում եմ կեանքովս:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Վախեցած եւ զինքը կորցած կամեմում է բռնել նրա ձեռքից). Հաննէս... Թող, թող այդ ի սէր Աստուծոյ: ՅՈՂ. Ես քեզ խօսք եմ տալիս:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Կանչում է). Հայրիկ, հայրիկ, շուտ արա, եկ: Հեշտութեամբ կարող է արձակուել և... հայրիկ. եկ խելքի բեր տղիդ:

Երբ Ֆօկերատը ներս է մտնում ննջարանից:

ՅՈՂ. Հայր: (Յանկարծ սրափուելով, վայր է գցում ասրնանակը):

ՖՕԿԵՐԱՏ. Այո, ես... այդ ես եմ—և այդպէս... այդպէս է վիճակուած ինձ քեզ հաղիպել:

ՅՈՂ. Այս ի՞նչ է նշանակում, մայր:

ՖՕԿԵՐԱՏ. (Մօտենալով նրան, լուրջ եւ հանդիսաւոր ձեւով ասում է): Որ դու պէտք է խելքի գաս, որդի—անա ինչ է այդ նշանակում:

ՅՈՂ. Ի՞նչը քեզ բերաւ այստեղ:

ՖՕԿԵՐԱՏ. Աստուծոյ կամքը, Աստուծոյ կամքը բերաւ ինձ քեզ մօտ:

ՅՈՂ. Մայրս քեզ հրաւիրեց:

ՖՕԿԵՐԱՏ. Այո, Հաննէս:

ՅՈՂ. Ի՞նչո՞ւ:

ՖՕԿԵՐԱՏ. Որ քեզ իբրեւ բարեկամ օգնեմ, այո:

ՅՈՂ. Բայց մի՞թէ ես կարօտ եմ օգնութեան:

ՖՕԿԵՐԱՏ. Այո, Հաննէս, որովհետեւ դու թոյլ ես: Մի թոյլ մարդ, ինչպէս մենք ամենքս, այո:

ՅՈՂ. Եւ եթէ ես այժմ թոյլ եմ, ինչո՞վ ես ուզում ինձ օգնել:

ՖՕԿԵՐԱՏ. (Մօտենում է նրան, բռնում նրա ձեռները): Ե՛ս պէտք է քեզ ասեմ թէ ինչքան հնք բոլորս քեզ սիրում, այո: Եւ ապա պէտք է քեզ նաև ասեմ, որ Աստուած զթառատ է դէպի մեղաւորը, այո, դէպի այն մեղաւորը, որ կը զղջայ:

ՅՈՂ. Ուրեմն ես մեղաւոր եմ:

ՖՕԿԵՐԱՏ. (Առաջուայ քննութեամբ): Մեծ մեղաւոր, այո—Աստուծոյ առաջ:

ՅՈՂ. Բայց ի՞նչ մեղք եմ ես գործել:



ՅՈԿԵՐԱՏ. Ով ցանկութեամբ է նայում, կնոջ, ասաց Գրիստոս, այն, իսկ դու աւելին ես արել, այն, այն:

ՅՈՀ. (Շարժում է անում, կարծես ուզում է ականջները փակել): Հայր...

ՅՈԿԵՐԱՏ. Մի փակուիր, Հաննէս: Տուր ինձ ձեռքդ, ինչպէս մեղաւորը մեղաւորին, և ընդունիր ինձ: Ընդունիր ինձ իբրև մի մարտակցի:

ՅՈՀ. Հայր, ես պէտք է քեզ ասեմ որ ես այլ գեանի վրայ եմ կանգնած քան դու:

ՅՈԿԵՐԱՏ. Դու կանգնած ես մի զառիվայր գեանի վրայ:

ՅՈՀ. Ինչպէս կարող ես դու այդ ասել, հայր: Դու հօ չես ճանաչում իմ ճանապարհը:

ՅՈԿԵՐԱՏ. Օ, ի հարկէ. այդ մի լայն ճանապարհ էր ի կորուստ: Ես լռելեայն հետևում էի քեզ: Այն, և բացի ինձնից նաև աւելի մի Բարձր էակ—Աստուած: Եւ որովհետև ես այդ գիտէի, ուստի ձգձգում էի կատարել իմ պարտքը, այն: Բայց այսօր ես գալիս եմ քեզ մօտ Նրա անունից և ասում քեզ. Յեռ կաց. դու կանգնած ես անդունդի առաջ:

ՅՈՀ. Ես պէտք է քեզ ասեմ, հայր... քո խօսքերը բարի են և անկեղծ մտածուած, բայց—նրանք իմ մէջ արձագանք չեն գտնում: Քո անդունդներից ես չեմ վախենում. բաց կան այլ անդունդներ, և որ դուք ինձ չը գործէք այնտեղ—ահա դրանից դուք զգուշացէք:

ՅՈԿԵՐԱՏ. Ո՛չ, Հաննէս... ոչ...

ՅՈՀ. Ուղիղ չէ թէ ով կը նայի կնոջ վրայ ցանկութեամբ նա լուծում է ամուսնութիւնը: Ես մաքառեցի և մաքառեցի...

ՅՈԿԵՐԱՏ. Ո՛չ, Հաննէս: Ո՛չ: Ես յաճախ եմ քեզ խորհուրդներ տուել, և նրանք միշտ քեզ օգուտ են տուել: Այսօր ես քեզ ասում եմ, քեզ մի խաբիր, վերջ դիր: Մտածիր քո կնոջ մասին, քո Ֆիլիպպիկի մասին, և նմանապէս մի քիչ մտածիր և քո ծեր ծնողների մասին: Մի բազմացնիր...

ՅՈՀ. Բայց չը պէտք է ինքս իմ մասին էլ մտածեմ, հայր:

ՅՈԿԵՐԱՏ. Դու միայն վճռիր և կը տեսնես թէ ինչպէս ազատ և թեթև կը զգաս քեզ:

ՅՈՀ. Իսկ եթէ այդպէս չը լինի:

ՅՈԿԵՐԱՏ. Ապաւինիր ինձ և այդպէս կը լինի:

ՅՈՀ. Իսկ եթէ... Իսկ օրիորդ Աննան:

ՅՈԿԵՐԱՏ. Աշխարհիս զաւակները, Հաննէս, հեշտ են մօռանում...

ՅՈՀ. Իսկ եթէ նա հեշտ չը մոռանայ:



ՖՕԿԵՐԱՏ. Այն ժամանակ նշանակում է Աստուծոյ կամքն էր այդպէս:

ՅՈՀ. Դէ, հայր... ես այլ հայեացք ունեմ: Մենք իրար չենք հասկանում: Եւ ի հարկէ այդ խնդիրներում երբէք իրար չենք հասկանայ:

ՖՕԿԵՐԱՏ. (Դեռ ըստ կարելոյն բարեհոգութեամբ): Այստեղ... այստեղ խօսքը բոլորովին հասկանալու մասին չէ: Դու սխալ ես ըմբռնում հանգամանքը, այն, այն: Հանգամանքը բոլորովին այլ է: Այդ դու էլ առաջ շատ լաւ գիտէիր: Բանը այն չէ... բանը իմ հասկանալ չը հասկանալը չէ:

ՅՈՀ. Մի նեղանար, հայր, բայց ինչո՞ւմ է բանը:

ՖՕԿԵՐԱՏ. Հնազանդութեան մէջ է, ես կարծում եմ, այն:

ՅՈՀ. Այսինքն դու կարծում ես որ ես պէտք է անեմ ամեն բան, ինչ որ դու ուզում ես, թէկուզ այդ ինձ անարդար թուի անգամ:

ՖՕԿԵՐԱՏ. Ես քեզ անարդար բան խորհուրդ չեմ տալ, այո: Շատ ցաւում եմ, որ ստիպուած եմ քեզ ասել... ստիպուած եմ քեզ մի քանի բան յիշեցնել, այո: Մենք քեզ մեծացրինք ոչ առանց հոգատարութեան և անքուն գիշերներին: Մենք քեզ խնամեցինք և ոչ մի զոհաբերութիւն չը խնայեցինք, երբ դու հիւանդ էիր, իսկ դու քո տղայութեանդ ժամանակ յաճախ ես հիւանդացի, Հաննէս, այո: Մենք ամեն ինչ արել ենք յօժարութեամբ և ուրախութեամբ:

ՅՈՀ. Այո, հայր, և այդ բոլորի համար ես շատ չնորհակալ եմ ձեզինք:

ՖՕԿԵՐԱՏ. Այդ միայն խօսքեր են. գործ, գործ եմ ես ուզում տեսնել: Բարեպաշտ, մաքուր, հնազանդ մարդ եղիր, այո, ահա որն է իսկական չնորհակալութիւնը:

ՅՈՀ. Ուրեմն քո կարծիքով ես ապերախտ եմ. ես արժանի չեմ ձեր ջանքերին:

ՖՕԿԵՐԱՏ. Դու դեռ յիշում ես, ինչպէս էիր երեսայ ժամանակդ միշտ աղօթում—մահճակալում, այո—երեկոյ և առաւօտ:

ՅՈՀ. Ինչի մասին, հայր:

ՖՕԿԵՐԱՏ. Ախ, Տէր Աստուած, աղօթում էիր դու, աղաչում եմ Քեզ, օգնիր ինձ լինել բարեպաշտ մանուկ: Իսկ եթէ ես չը դառնամ...

ՅՈՀ. Աւելի լաւ է ինձ վերցրու երկրից: Ուրեմն դու կարծում ես որ աւելի լաւ կը լինէր, եթէ դուք ինձ թաղէիք դեռ այն ժամանակ:



ՖՕԿԵՐԱՏ. Եթէ դու շարունակում ես ընթանալ զառիվայր ուղիով... այո... եթէ քո սիրտը մնում է յամառ...

ՅՈՀ. Այո, ես էլ եմ կարծում որ այդ աւելի լաւ կը լինէր:

Փոքր դադար:

ՖՕԿԵՐԱՏ. Ուշքի եկ, որդեակ, յիշիր նրանց, Հաննէս, այո, նրանց, որոնք քեզ յորդորել են. յիշիր պատօր Պֆէյֆէրին, քո բարեպաշտ ուսուցչին և խոստովանաօրը: Յիշիր...

ՅՈՀ. (Դուրս գալով իրանից). Հայր. թող ինձ հանգիստ իմ այդ ուսուցիչներով, եթէ չես ուզում որ ծիծաղեմ: Մի յիշեցնիր ինձ այդ ոչխարագլուխների հասարակութիւնը, որ դաստիարակելու տեղ հանել է ծուծը իմ ոսկորներից:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Օ՛, երկնային Հայր:

ՖՕԿԵՐԱՏ. Լսիր, Մարթա, լսիր: (Յոհաննէսին): Քո ուսուցիչները և մենք այդ վերաբերմունքին չէինք արժանի:

ՅՈՀ. (Բղաւելով). Դուք ինձ սպանեցիք:

ՖՕԿԵՐԱՏ. Դու յանցանք ես գործում, Հաննէս:

ՅՈՀ. Ես գիտեմ թէ ինչ եմ ասում. դուք ինձ սպանեցիք:

ՖՕԿԵՐԱՏ. Այդպէս ես վարձատրում մեր սէրը:

ՅՈՀ. Ձեր սէրը ինձ սպանեց:

ՖՕԿԵՐԱՏ. Ես այլ եւ քեզ չեմ հասկանում:

ՅՈՀ. Այդ ես ինքս էլ գիտեմ, հայր: Դուք երբէք ինձ չէք հասկացել և երբէք էլ չէք հասկանալ:

Փոքր դադար:

ՖՕԿԵՐԱՏ. Լաւ, լաւ, Հաննէս: Ես վերջացրի: Ես չը գիտէի որ բանը այդքան հեռու է գնացել: Ես յոյս ունէի, բայց իմ միջոցները սպառուեցան: Այստեղ միայն Աստուած կարող է դեռ օգնել: Գնանք, իմ պառաւ Մարթա, մենք այժմ աւելի բան չունենք այստեղ փնտրելու, այո: Մենք պէտք է մի այլ տեղ թագնուենք և սպասենք. մինչև որ ողորմած Աստուած մեզ կը կանչէ: (Նորից դիմում է Յոհաննէսին): Բայց, Հաննէս. մի բան եւ պէտք է քեզ ասեմ. մի թաթախիր ձեռներդ արեան մէջ: Լսում ես: Այդ մեղքն էլ մի վերցրու քեզ վրայ:—Արդեօք լաւ մտածել ես և Կէթէի մասին: Դու գիտես որ մենք վախճանում ենք որ նա խելագարուի: Նայել ես ուշադրութեամբ այդ խեղճ, սիրելի էակի վրայ, չէ: Արդեօք բաւականաչափ պարզ է քեզ համար թէ ինչ էք դուք արել նրա հետ: Թող մայրդ միայն պատմի թէ ինչպէս է խեղճ Կէթէն գիշերներով լալիս և հեկեկում քո պատկերի վրայ: Դէ միանգամ եւ կրկնում եմ, Հան-



նէս, մի թաթախիր ձեռներդ արեան մէջ: Եւ այժմ մենք վերջացրինք, այն եկ գնանք, Մարթա, գնանք:

ՅՈՀ. (Կարճատեւ մախառումից յետոյ): Հայր, մայր:  
Տ. ՖՕԿԵՐԱՏ. } (Յէս են նայում, Յոհաննէսը բնկնում է  
ՖՕԿԵՀԱՏ. } նրանց գիրկը): Յոհաննէս:

#### Դադար:

ՅՈՀ. (Ընկճուած ձայնով): Հիմա ասէք, ի՞նչ պէտք է ես անեմ:

ՖՕԿԵՐԱՏ. Մի պահիր օրիորդին: Թող նա գնայ, Հաննէս:

ՅՈՀ. Խոստանում եմ քեզ այդ: (Ուժասպառ եղած, սփալուած է նսել արողի վրայ):

Տիկին Ֆօկերատը ուրախացած շտապում է դէպի ննջարանը:

ՖՕԿԵՐԱՏ. (Շուրմ է Յոհաննէսին եւ համբուրում նրա նակարս): Իսկ այժմ—թող Աստուած քեզ ոյժ տայ: (Գնում է ննջարան):

Յոհաննէսը մի քանի վայրկեան նստում է հանդարտ. ապա ցնցում է ամբողջապէս, դառնում է անհանգիստ, վեր է կենում տեղից, պատուհանից դիտում աղջամուղջը, չետոյ բաց է անում դրսի դուռը:

ՅՈՀ. Ո՞վ է այդտեղ:

ՕՐ. ԱՆՆԱ. Այդ ես եմ, պարոն Յոհաննէս: (Ներս է մտնում):

ՅՈՀ. Դուք ուզում էք դնալ առանց մնաք բարեաւ ասելու: (Յէս ու առաջ փայլելով):

ՕՐ. ԱՆՆԱ. Իսկապէս մի բոպէ ես տատանւում էի: Բայց այժմ այդպէս լաւ է:

ՅՈՀ. Ես սարսափելի դրութեան մէջ եմ: Իմ հայրը այստեղ է: Ես նրան երբէք այդպէս չեմ տեսել: Միշտ ուրախ ու պարզ մարդ... Ես չեմ կարողանում բաժանուել այդ տպաւորութիւնից: Իսկ միւս կողմից պէտք է տեսնեմ, թէ ինչպէս դուք մեզ նից հեռանում էք, օրիորդ և...

ՕՐ. ԱՆՆԱ. Լսէք, պարոն դօկտօր, չէ որ ես այսպէս թէ այնպէս պէտք է հեռանայի:

ՅՈՀ. Բայց դուք չը պէտք է գնաք. դուք չէք կարող գնալ: Գոնեա այժմ, այժմ այս վայրկեանում: (Նստում է, նակարս յեկում ձեռներին, խոր հառաչ է դուրս գալիս նրա կրծքից):

ՕՐ. ԱՆՆԱ. (Յուզուած, հազիւ լսելի ձայնով): Պարոն դօկտօր: (Կամաց դնում է ձեռքը նրա մագերին):

ՅՈՀ. (Ուղղւում է տեղում, հառաչելով): Ախ, օրիորդ Աննա:

ՕՐ. ԱՆՆԱ. Յիշէք այն խօսքերը, որ մենք մի քանի ժամ



առաջ ասացինք:—Ստիպումը պէտք է առաքինութիւն դարձնենք:

ՅՈՂ. (Վեր է կենում տեղից եւ յուզուած յետ առաջ փայլում): Ես չը գիտեմ ինչի մասին ենք մենք խօսացել: Գլուխս դադարկ է և ամայի և տանջուած: Ես չը գիտեմ անգամ թէ ինչ եմ խօսել հօրս հետ: Ես ոչինչ չը գիտեմ Դատարկ է և ամայի իմ գլուխս:

ՕՐ. ԱՆՆԱ. Ախ, շատ լաւ կը լինէր, պարոն Յոհաննէս, եթէ մեր վերջին բողոքները լինէին պայծառ բողոքներ:

ՅՈՂ. (Կարճատեւ ներքին կռուից յետոյ): Օգնեցէք ինձ, օրիորդ Աննա: Այլ ես ոչինչ վեհութիւն, ոչինչ հպարտութիւն չը մնաց իմ մէջ: Ես այլ մարդ դառայ: Հէնց այժմ, այս վայրկեանում ես արդէն այն չեմ, ինչ որ էի, մինչև ձեր մեղ մօտ գալը: Ես միայն ունեմ զգուանք դէպի ինձ և հակակրթութիւն դէպի կեանքը: Ինձ համար ամեն ինչ նուազագուէն, պղծուեց, աղտոտուեց, արատաւորուեց, ցեխի մէջ տրորուեց: Սակայն ես զգում եմ, որ ես մի բան էի, ձեր շնորհիւ, ձեր ներկայութեան, ձեր խօսքերի շնորհիւ—և եթէ ես կրկին չեմ կարող նոյնը լինել, այն ժամանակ... այն ժամանակ ինչիս է պէտք միւս բոլորը: Այն ժամանակ ես հաշիւը կը փակեմ և... վ երջ կը դնեմ:

Յետ ու առաջ է գնում և ապա կանգ առնում Աննայի առջև: Տուէք ինձ մի նեցուկ: Տուէք ինձ մի բան, որի վրայ ես կարողանայի կանգնել: Մի նեցուկ: Ես ջախջախուած եմ ամբողջապէս: Մի յենարան: Ամեն ինչ իմ մէջ, օրիորդ, ջախջախուեց իսպառ:

ՕՐ. ԱՆՆԱ. Պարոն դօկտօր: Ինձ մեծ վիշտ է պատճառում ձեզ այդպէս տեսնելը: Ես չը գիտեմ ինչպէս ձեզ նեցուկ լինել: Բայց մի բան պէտք է մտաբերէք: Մենք այս առաջուց գիտէինք, մի օր առաջ, մի օր ուշ մենք պէտք է ամեն բանի համար պատրաստ լինէինք, պարոն դօկտօր:

ՅՈՂ. (Կանգնում է լուռ եւ մտածողութեան մեջ):

ՕՐ. ԱՆՆԱ. Մտաբերեցի՞ք հիմա: Ուզում էք եկէք փորձենք դրա մասին: Դուք արդէն գիտէք թէ ինչի մասին: —Ուզում էք մենք մեզ համար մի կանոն դնենք—և նրա համեմատ վարուենք: Միայն մենք երկուսս,—մեր ամբողջ կեանքի ընթացքում, եթէ մենք անգամ երբէք իրար նորից չը հանդիպենք—վարուենք մի յատուկ կանոնով: Ուզում էք: Դրանից զատ ոչինչ չը կայ, որ կարող լինի մեզ միացնել: Մենք չը պէտք է մեզ խաբենք այդ մասին: Ամեն ուրիշ բան մեզ բաժանում է: Այդպէս չանենք: Համաձայն էք:

ՅՈՂ. Այո, ես զգում եմ որ այդ ինձ կարող էր պահել:



Ես կարող էի նոյն իսկ աշխատել առանց յոյսի թէ նպատակին կը հասնեմ: Բայց ով կը երաշխաւորի: Ո՞րտեղից վերցնեմ ես հաւատ: Ո՞վ է ասուում ինձ, որ ես ինձ չեմ տանջում ոչնչութեան համար:

ՕՐ. ԱՆՆԱ. Եթէ մենք կ'ամեն ու մ'ենք, պարոն դօկտօր, ինչի են մեզ հարկաւոր հաւատ և երաշխաւորութիւն:

ՅՈՂ. Բայց եթէ իմ կամքը ամուր չէ:

ՕՐ. ԱՆՆԱ. (Բոլորովին ցած ձայնով): Եթէ իմ կամքը թուլանայ, ես կը սկսեմ մտածել նրա մասին, որ նոյն կանոնի տակ է կանգնած: Եւ ես հաստատ գիտեմ որ այդ կ'ամրացնի: — Ես կը յիշեմ ձեր մասին, պարոն Յովհաննէս:

ՅՈՂ. Օրիորդ Աննա.... Լաւ, ես կ'ամեն ու մ'եմ, ես կ'ամեն ու մ'եմ: — Նախադրացումը մի նոր, ազատ դրութեան, մի հեռաւոր այսպէս ասած երանելի երջանկութեան, որ մեր մէջ կ'ար—այդ մենք կը պահպանենք: Այն ինչ որ մենք մի անգամ զգացինք, այն հնարաւորութիւնը, որ մենք զգացինք, այսուհետեւ չը պէտք է կորչի գնայ: Մի և նոյն է ունի նա ապագայ թէ ոչ, նա պէտք է մնայ: Այդ բոցը պէտք է շարունակ վառուի իմ մէջ և երբ նա մարի, կը մարի և իմ կեանքը: (Երկուսն էլ լուռ ու ցնցուած): Շնորհակալ եմ ձեզից, օրիորդ Աննա:

ՕՐ. ԱՆՆԱ. Մնաք բարով, Յովհաննէս:

ՅՈՂ. Ուր էք հիմա գնում:

ՕՐ. ԱՆՆԱ. Երեւի հիւսիս—երեւի հարաւ:

ՅՈՂ. Ձէք ուզում ինձ ասել թէ ուր:

ՕՐ. ԱՆՆԱ.—Բայց աւելի լաւ չէր լինի որ դուք ինձ չը հարցնէիք դրա մասին:

ՅՈՂ. Բայց միթէ մենք չենք կարող... գէթ մի երկու խօսք... գէթ կարճ տեղեկութիւններ գրել... թէ ինչ ենք անում, ուր ենք գտնուում...

ՕՐ. ԱՆՆԱ. (Շարժում է գլուխը, դառն ժպտալով): Իրաւունք ունենք: Միթէ այդ ամենամեծ վտանգը չի լինի, թէ մենք ինքներս մեզ համար խորտակում ենք պատրաստում: Իսկ երբ մենք խորտակուենք—այն ժամանակ մենք նաև խաբուած կը լինենք:

ՅՈՂ. Լաւ, լաւ,—եւ կը կրեմ այդ բեռը: Ես նրան կը տանեմ հաստատուն կերպով—թէկուղ նա ինձ ձմրի: (Բռնելով Աննայի ձեռքը): —Երջանիկ ապրէք:

ՕՐ. ԱՆՆԱ. (Իրան յաղթելով, մերթ սպրբելով, մերթ կարմրելով, շփոթուած եւ խոր յուզուած): Յովհաննէս. մի բան ես... այս մատանին... հանուած է մի մեռած կնոջ մատից, մի կնոջ...



որ իր... մարդուն... իր մարդուն հետեց մինչև Սիբիր: Հաւատարմութեամբ նրա հետ մինչև վերջը տարաւ բոլոր նեղութիւնները, (Կիսակասակ): Մեր դէպքում բոլորովին հակառակն է:

ՅՈՂ. Օրիորդ Աննա: (Մօտեցնում է նրա ձեռքի իր օրօններին եւ այդպէս պինդ պահում):

ՕՐ. ԱՆՆԱ. Ես երբէք այլ զարդ չեմ կրել: Երբ մարդ թուլանում է՝ պէտք է միշտ այն պատմութիւնը, որ կապուած է այդ մատանու հետ: Եւ երբ դուք զրան նայէք—թուլութեան բոլորներում—այն ժամանակ... մտաբերէք նաեւ... նրա մասին... որ ձեզնից հեռու—մենակ ինչպէս դուք... մաքառում է նոյն խորհրդաւոր կուռում: Մնաք բարով:

ՅՈՂ. (Զինքն կոտորելով): Երբ էք, երբ էք մենք իրար չը պէտք է կրկին տեսնենք:

ՕՐ. ԱՆՆԱ. Եթէ մենք կրկին տեսնուենք, մենք կորած ենք:

ՅՈՂ. Բայց եթէ միայն ես այս կարողանամ տանել:

ՕՐ. ԱՆՆԱ. Այն ինչ որ մեզ չի յաղթում, այն մեզ աւելի ուժեղ է դարձնում: (Նա ուզում է գնալ):

ՅՈՂ. Աննա, քոյր:

ՕՐ. ԱՆՆԱ. (Արժանաւարկ): Եղբայր Յոհաննէս:

ՅՈՂ. Միթէ չի կարող եղբայրը համբուրել իր քրոջը—յաւերեան բաժանուելուց առաջ:

ՕՐ. ԱՆՆԱ. Հաննէս, ոչ:

ՅՈՂ. Այո, Աննա, այո, այո: (Նա գրկում է նրան եւ երկուսի օրօնները միանում են միակ, երկու բոցավառ համբույրով, ապա ազատում է Աննան եւ անհետանում պատշաճօրէն):

Յոհաննէսը մի վայրկեան կանգնած է շմաժի պէս, ապա սկսում է մեծ քայլերով անց ու դարձ անել, ձեռքը քսում է մազերին, հառաչում է, հառաչում է աւելի ուժգին, մնում է կանգնած, ուշադրութեամբ աւանջ է դնում Յանկարծ հետուից լսում է աղմուկ մօտեցող զնացքի, որ սրընթաց անցնում է անտառի միջով: Յոհաննէսը բաց է անում պատշկամբի դուռը եւ ականջ դնում: Աղմուկը աւելի ուստականում է, լետոյ դադարում է: Որոշ լսում է կայարանի զանգը: Լսում է երկրորդ եւ ապա երրորդ զանգը: Սուրբը փչում է: Յոհաննէսը դիմում է դէպի իր սենեակը, բայց ճանապարհին ընկնում է ակոռի վրայ: Նրա մարմինը ցնցում է լացից եւ հեկեկալուց: Պատշկամբի վրայ ընկնում է լուսնի դժգոյն լոյսը:—Հարեան սենեակում լսում է աղմուկ: Բարձր խօսում են: Յոհաննէսը ցատկում է տեղից, ուղղում է դէպի իր սենեակը, կէս ճանապարհին մնում է կանգնած, մի վայրկեան մտածում է եւ սրընթաց դուռը թռչում պատշկամբով: Ծեր ֆօկերատը ներս է մտնում ննջարանից, տիկին ֆօկերատը հետևում է նրան: Երկուսն էլ զնում են դէպի դռնի դուռը:

ՅՓԿԵՐԱՏ. (Մնում է կանգնած): Հաննէս:—Ինձ այնպէս թուաց, որ այստեղ մարդ կայ:



Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Արդէն դրսի դռան մօտ)։ Մէկը բարձրացաւ սանդուղքներով։

ՖՕԿԵՐԱՏ. Այո՛, այո՛, տղան հանգստանում է։ Նրան չը պէտք է խանգարենք։ Գուցէ աւելի լաւ կը լինէր ուղարկել նրա մօտ Բրաունին։

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ի հարկէ, հայրիկ։ Ես կ'ուղարկեմ որ նրան կանչեն։—Կամ գուցէ աւելի լաւ կը լինէր, հայրիկ, որ ես բարձրանայի Յոհաննէսի մօտ։

ՖՕԿԵՐԱՏ. (Մօտենում է պատշգամբի դռան)։ Ո՛չ, Մարթա, աւելի լաւ է չը գնաս։ (Բաց է անում դուռը եւ ականջ դնում)։ Հիանալի լուսնեակ գիշեր։ Լսի՛ր։

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Շտապով մօտենում է)։ Այդ ի՞նչ է։

ՖՕԿԵՐԱՏ. Վայրի սագեր—տեսնում ես, այստեղ, լճի վրայ, Կէտեր, որոնք լուսնի դիմաց թռչում են։

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ի՛հ, դու էլ, իմ աչքերը, այնքան էլ ջահէլ չեն։ (Յետ է գնում դէպի դրսի դուռը)։

ՖՕԿԵՐԱՏ. Լսի՛ր։

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ախր ի՞նչ։ (Մնում է կանգնած)։

ՖՕԿԵՐԱՏ. Սոս, Մարթա։

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ի՞նչ է, հայրիկ։

ՖՕԿԵՐԱՏ. (Փակում է դուռը, հետեւում է իր կնոջ)։ Ոչինչ։ Ինձ թուաց, Մարթա, որ մէկը՝ այստեղ ներքեւում աղմկում է թիակներով։

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ո՞վ կարող է այդ անել։ (Երկուսն էլ հետանում են մութի դռնով)։

Մէկը պատշգամբից պատուհանի միջով նայում է ներս։ Այդ Յոհաննէսն է։ Դրանից չեսոյ խելոյն նա զգուշութեամբ ներս է մտնում։ Նա փոխուած է երեսում, մեռելի նման զոնատ, շնչում է բաց բերանով։ Շտապ է լի երկիւղով, թէ մի՛ գուցէ լանկարձակի վրայ հասնեն. նայում է շուրջը, որոնում է թղթի կտոր, գրում է մի քանի խօսք, ապա հէնց որ աղմուկ է լսում, տեղից ցատկում, վայր է գցում զրիշը և դուրս փախչում պատշգամբով։ Պարոն և տիկին Ֆօկերատը լետ են գալիս, շրջապատած տիկին Կէթին։

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Այդ ի՞նչ ես անում, ինչո՞ւ ես նստել մըթ-նումը։

Տ. Կէթի. (Զեռները բռնելով աչքերի առաջ)։ Աչքերս ծակում է լոյսը։

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Չէ, տեսէք, տեսէք ինչպէս է այդքան երկար նստում մըթնումը մեր չարածին։

Տ. Կէթի. (Մի փիչ անվստահ)։ Ինչո՞ւ... Ինչո՞ւ այդքան քրնքուէք ու սիրալիր ինձ հետ։



ՖՕԿԵՐԱՏ. Որովհետև դու մեր միակ, սիրելի, աննման աղջիկն ես: (Համբուռում է նրան):

Տ. Կէթէ. (Թոյլ ժպտալով): Այո, այո. դուք ինձ խղճում էք:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Էլի՛ քեզ լաւ չես զգում, Կէթէ:

ՖՕԿԵՐԱՏ. Աստուծով լաւ կը լինես: Հիմա ամեն բան դարձեալ իր սովորական ընթացքը կը ստանայ: Վատթարագոյնը, փառք Աստուծոյ, անցաւ:

Տ. Կէթէ. (Նստելով սեղանի մօտ եւ կարճ լռութիւնից յետոյ): Գիտես, մայրիկ... ախ, լոյսը դեռ կուրացնում է—ես ինձ այնպէս եմ զգում, ինչպէս մէկը, որ մեծ անմտութիւն անելով միայն նոր-նոր է խելքի գալիս:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ի՞նչ ես ուզում ասած լինես:

Տ. Կէթէ. Աննան գնաց, մայրիկ:

ՖՕԿԵՐԱՏ. Այո, Կէթէ: Եւ այժմ... այժմ դու պէտք է կրկին ուրախ եւ երջանիկ լինես:

Տ. Կէթէ. (Լռում է):

Ֆ. ՖՕԿԵՐԱՏ. Դ՛ու այլ եւ չես սիրում Յոհանէսին, Կէթէ:

Տ. Կէթէ. (Կարճ մտածութիւնից յետոյ): Այնու ամենայնիւ, իմ կեանքս այնքան էլ վատ չանցաւ: Ֆաննի Շտէնցէլը մարդու գնաց մի պաստօրի: Թէկուղ նա այնքան դո՛հ է և բախտաւոր, կարծում ես թէ ես կը փոխէի՛ նրա հետ իմ գրութիւնս: Ոչ, ի հարկէ, ոչ—Այստեղ ծխի հոտ է գալիս, չէ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ո՛չ, զաւակս, ես չեմ լսում հոտ:

Տ. Կէթէ. (Հէծեծելով կոսրաւում է ձեռները): Ախ, Աստուած, ամեն ինչ վերջացաւ, ամեն ինչ վերջացաւ:

ՖՕԿԵՐԱՏ. Կէթիւէն, Կէթիւէն: Մի՛թէ կարելի է այդքան փոքրոգի լինել: Ես դարձեալ հաւատա ու յոյսս դնում եմ Աստուծոյ վրայ: Ողորմած Աստուածը ունի անսովոր միջոցներ և ճանապարհներ մոլորուած հոգիները յետ բերելու համար: Ինձ թւում է, Կէթիւէն, որ ես նրա տնօրէնութիւնը թափանցեցի:

Տ. Կէթէ. Տեսնում ես, մայրիկ, իմ առաջին զգացմունքը, որ ես ունէի այն ժամանակ, երբ Հաննէսը եկաւ ինձ մօտ և առաջարկութիւն արաւ—այդ զգացմունքը բոլորովին ուղիղ էր: Յիշում եմ որ ամբողջ օրը պտտում էր իմ գլխում թէ ինչ կարող է գտնել իմ մէջ այդպիսի զարգացած և ուսեալ մի մարդ: Թէ սա ինչ ընդհանուր բան կարող է ունենալ ինձ հետ: Տեսնում ես, բոլորովին ուղիղ էր իմ մտածմունքը:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ո՛չ, Կէթիւէն, նա չէ բարձր կանգնած քեզից, այլ դու նրանից: Նա պէտք է քեզ նայի ներքևից վերև, ահա ճշմարտութիւնը:



ՖՕԿԵՐԱՏ. (Դողդոջիւն ձայնով): Բայց հէնց այդ պատճառով հիշտ այնպէս է, ինչպէս Մարթան ասաց, այն... բայց հէնց այդ պատճառով—եթէ դու կարող ես ներել... եթէ դու նրա մեծ մեղքը կարող ես ներել...

Տ. Կեթէ. Ախ, եթէ բանը ներելուն մնար... կարելի է ներել մի անգամ,—հարիւր անգամ—հազար անգամ—բայց Հաննէսը... Հաննէսը չի նուստանալ: Ես ողորմելի արարածս բան չունեմ Հաննէսին ներելու: Խնդիրը պարզ է. դու այս ես —և ոչ այն: Ես այժմ գիտեմ միայն, թէ ինչ եմ ես և ինչ չեմ: (Դռնից լսում է կրկնուելով «հօթ-պպ»՝ օգնութեան կոչը):

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Կէթէ, սիրելիս. ես ուզում եմ քեզ մի առջարկութիւն անել: Լսիր, եկ, գնանք. ես քեզ կը պառկեցնեմ անկողնում և մի բան կը կարգամ քեզ՝ Գրիմի հէքեաթները. մինչև որ դու կը քնես: Եւ վաղ առաւօտ ես կը պատրաստեմ քեզ համար չորվա և թերխաշ ձու, յետոյ դու կը վեր կենաս և յետոյ մենք կը գնանք պարտէզ, իսկ այնտեղ կարմիր արևը չառ լաւ է լուսաւորում, և այնտեղ ամեն բան քեզ այլ կերպով կ'երեւայ քան այսօր երեկոյեան: Եկ, գնանք:

ԲՐԱՌԻՆ. (Մտնում է պաշտօնաւորի): Բարի երեկոյ:

ՖՕԿԵՐԱՏ. Բարի երեկոյ, պարոն Բրաուն:

ԲՐԱՌԻՆ. Բարի երեկոյ, պարոն Ֆօկերատ: (Ձեռք է տալիս):

Յոհաննէսը տանն է:

ՖՕԿԵՐԱՏ. Կարծեմ վերելում է:

ԲՐԱՌԻՆ. Հա. —այսինքն, հաստատ:

ՖՕԿԵՐԱՏ. Կարծեմ: Մարթա, այդպէս չէ: Սակայն ինչ է պատահել:

ԲՐԱՌԻՆ. Ես ուզում եմ դեռ նրան տեսնել: (Արագ դուռն է գնում դռնի դռնով):

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Թեքել անհանգստութեամբ): Ի՞նչ է պատահել Բրաունին:

Տ. Կեթէ. (Երկիւղից յուզուած): Սակայն ո՞ր է Հաննէսը:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Միայն մի վախիւր, Կէթէ, սիրելիս. ո՞ր պէտք է լինի, ի հարկէ այստեղ է:

Տ. Կեթէ. (Արագ անող անհանգստութեամբ): Հա, բայց ո՞ր է նա:

ՖՕԿԵՐԱՏ. Ի հարկէ վերելում... վերելում... բնականաբար այնտեղ է:

ԲՐԱՌԻՆ. (Վերադառնում է: Սասիկ լարուածութեան վայրկեան, Լռութիւն):

ՖՕԿԵՐԱՏ. Հը, ինչ է, այնտեղ է նա, պարոն Բրաուն...



ԲՐԱՌՈՒՆ. Ո՛չ, պարոն ֆոկերատ, նա վերևում չէ և... և...

ՖՕԿԵՐԱՏ. Հա՛, մի՛թէ, Բայց ի՛նչ է պատահել ձեզ:

ԲՐԱՌՈՒՆ. Ոչինչ, ոչինչ:

Տ. Կէթէ. (Վազելով Բրաունի մօտ): Այո՛, դուք ինչ-որ բան գիտէք:

ԲՐԱՌՈՒՆ. Ո՛չ, ոչ, իսկապէս ոչ: Իսկապէս ոչ մի հիմք չը կայ անհանգստանալու—միայն—ինձ թւում է, որ ոչ մի կերպ չը պէտք է հիմա Հաննէսին մենակ թողնել: Եւ երբ ես հիմա մի քիչ առաջ... ախ, ոչ՝ այդ իսկապէս անհեթեթ միտք է:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Հա՛, ուրեմն մի քիչ առաջ ի՛նչ, ասացէք շուտով:

ՖՕԿԵՐԱՏ. Դէ, շուտ ասացէք, ժամանակ մի կորցնէք:

ԲՐԱՌՈՒՆ. Իսկապէս ոչինչ առանձին բան: Երբ մի քիչ առաջ ես բացի պարտէզի դուռը—ինձ թուաց, որ մէկը յետ է անում նաւակը, և երբ ես աւելի մօտեցայ, մէկը ճիշտ որ հեռանում էր նաւակով: Մէկը—ես չը գիտեմ ով—մի մարդ: Այն ժամանակ ես վճռեցի նրան կանչել—բայց պատասխան չը տուաւ: Իսկ Հաննէսը անշուշտ կը պատասխանէր:

Տ. Կէթէ. (Խելակորոյսի նման): Յոհաննէս: Այդ Յոհաննէսն էր: Վազէք, շտապէք, ի սէր Աստուծոյ, որքան կարող էք արագ: Մայր, հայր: Դուք նրան ծայրայեղութեան հասցրիք: Ինչո՞ւ, ինչո՞ւ դուք այդ արիք...

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Բայց, Կէթէ:

Տ. Կէթէ. Այո՛, ես այդ զգում եմ: Նա այլ ես չէ կարող ապրել: Ես պատրաստ եմ ամեն ինչ անել: Միայն այդ ոչ, միայն այդ ոչ:

ՖՕԿԵՐԱՏ. (Վազում է պարտէզ, ժամանակ առժամանակ կանչում է): Հաննէս, Յոհաննէս:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Վազում է բակը եւ կանչում): Հաննէս, Հաննէս:

Տ. Կէթէ. (Դիմելով Բրաունին): Մի մարդ: Դուք նրան կանչեցիք: Նա ոչինչ չը պատասխանեց: Վազէք, վազէք:

ԲՐԱՌՈՒՆ. (Գնում է):

Տ. Կէթէ. (Նրա հետեւից կանչում է). Ես էլ եմ գալիս: (Կոտրակով ձեռները): Ախ Տէր Աստուած, Տէր Աստուած: Միայն թէ կենդանի լինէր նա: Միայն թէ նա դեռ կարողանար ինձ լսել:

Լսում է լճի վրայից Բրաունի կոչը՝ «հօլօ՛ւպպ», «հօլօ՛ւպպ»:



Տ. ԿԵԹԷ. (Կանչում է դեպի դրսի դուռը): Ա՛լմա, Մ՛հնա,  
լապտերները պարտէ՛զ տարէ՛ք: Շուտ, լապտերները: (Ուզում է  
վազել դեպի պատեկամբը, նկատում է Յոհաննեսի գրած բլրիկը,  
կանգ է առնում մոմի նման ձգուած, մօտենում է սառածի պէս  
եւ դողդողալով վերցնում բլրիկը, մի քանի վայրկեան փառացա-  
ծի նման մնում է բեւեռուած եւ ապա վայր է ընկնում: Դրսից  
դեռ եւս շարունակ լսում են օգնութեան կանչող աղաղակներ):

Թարգմ. Ե.—Ա.

(Վ. Ե. Բ. Զ.)